№ 30 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 16 **1891** ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 16 № 30

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ծաղկաձորից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ամուսնական խնդիրն Ամերիկայում. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՐՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ջելէբ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԾԱՂԿԱՁՈՐԻՑ

—

Մարտի 11-ին

Գարուն է արդէն: Մարտ ամիսը բերեց իր հետ աւելի տաք և աւելի պայծառ օրեր: Այժմ գուցէ չատ տեղեր երկրագործներն արդէն սկսել են պարապել իրանց դաշտային այլ և այլ աշխատութիւններով: Բայց Ծաղկաձորի շրջանում չատ գիւղաչատեր դեռ ևս ձիւնով են ծածկված: Նոյն իսկ սահնակներով անցուդարձը, ահա մի քանի օր է, որ հազիւ դադարեց, տեղի տալով կառքերով կատարվող երթևեկութեան:

Եղանակի խիստ պարզութեան պատճառով գիշերները ցուրտ է լինում: Արևը մայր մտնելուն պէս սկսվում է սառնամանիք և այդ պատճառով շրջակայքի ձիւնը, գիշերները սառչելով, քիչքիչ է հալվում: Եւ բնական այդ հանգամանքների շնորհով, այս տարի հացի ցանքն այս կողմերում գուցէ ուշ սկսվի:

Անցեալ տարի Ծաղկաձորի հողագործներից, թէ հայերից և թէ մալականներից, չատերն իրանց ցանքը սկսեցին մարտի 1-ից, այն ինչ այս տարի, չը նայած որ արդէն մարտի 11-ն է, դեռ մի ամիս կը տեի անշուշտ մինչև ցանքը կը սկսվի: Բայց պէտք է նկատել, որ հացի ցանքը Ծաղկաձորում, թէ վաղ սկսվի նա և թէ ուշ, առհասարակ հասունանում է համարեա թի միաժամանակ: Այսինքն, գարին, եթէ ցանվի թէ մարտ, թէ ապրիլ և թէ մայիս ամիսներում—նա կը հասունանայ և կը քաղվի միաժամանակ, նոյն իսկ օգոստոսին:

Բիչ ուշ ցանք անելով, թող չը կարծէ ռաշպար-դասակարգը Ծաղկաձորում, թէ աւելի պակաս արդիւնք է ստանալու հացի բերքից և կամ չատ վաղ ցանելուց նոյնպէս անբնական է առատ պտղաբերութիւն յուսալ, քանի որ մեզանում թէ թէ մարտ, թէ ապրիլ և թէ նոյն իսկ մայիս ամիսներում տեղի ունեցող ցանքերը բնականաբար հասունանում են իրանց սովորական ժամանակամիջոցում:

Ծաղկաձորում ձմեռը տևում է 5—6 ամիս. նոյեմբերից սկսած մինչև ապրիլ ամիսը գիւղացու անասուններն այդ դաւառակում կապված են և կերակրվում են խոտով ու դարմանով: Նոյն իսկ վարուցանքի միջոցին, որ մի ամիս աւելի է տևում, վարող անասունները կերակրվում են խոտով: Երկարատև ձմրան պատճառով յիշեալ դաւառամասի չատ գիւղերում յարդի պակասութիւն է զգացվում և գիւղացիներից չատերը ստիպված են չուալներով ու տոպրակներով յարդ գընել՝ իրանց անասուններին սովից ազատ կացուցանելու համար: Թէ որպիսի դրութեան մէջ կը լինի ռաշպար-գիւղացու վիճակն այն ժամանակ, երբ նա ստիպված կը լինի փողով խոտ և դարման գնել իր աւելի ունևոր հարևանից՝ իր սպառող անասունները կերակրելու համար,—այդ դժուար չէ երևակայել...

Գ. Ս.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թաթում, 9 մարտի

Խոնարհաբար խնդրում եմ ձեր պատուական լրագրի մէջ տեղ տալ հետևեալ տողերին:

Իմ անունով հաստատված տեղիս եկեղեցուն պատկանող հողի մասին ես պատիւ ունեցայ «Մշակի» միջոցով բացատրել, թէ այդ հողը առնելուց յետոյ առաջին՝ ս. սինոդին ստորագրութիւն եմ տուել, որը ապացուցում է հողը եկեղեցուն պատկանելը. երկրորդ՝ թէ յանձնել եմ եկեղեցուն, բացի դրանից, օրէնքի պահանջած և ուրիշ դոկումենտներ:

Սրանով այս հարցին ես վերջ կը տայի, եթէ պ. Արշակ Ծատուրեանը ձեր պատուական լրագրի 21 համարի մէջ չը պահանջէր ինձանից պատասխանել նրա հետևեալ հարցին: «Եթէ պ. Յովհաննիսեանց եկեղեցուն յանձնել է օրէնքի պահանջած դոկումենտները, ապա ինչ հաւատարմութիւնի է տուել կամ վաղուց տուած է եղել պ. Մէնանդեանցին հողը ս. սինոդին յանձնելու մասին և այլն:» Այս հարցից միայն կարելի է եզրակացնել, որ պ. Ծատուրեան չէ կարողանում կամ չէ ցանկանում հասկանալ,—որ յանձնել եկեղեցուն դոկումենտներ, որոնք ապացուցում են հողը եկեղեցուն պատկանելը և որոնց հիման վրա եկեղեցին իրաւունք է ունեցել և ունի այդ հողը իր անունով հաստատել, չէ նշանակում եկեղեցուն կալուածաթողութ տալ: Ես իմ նամակիս մէջ չեմ վկայել, թէ վերոյիշեալ հողի մասին կալուածագիր է չինված. ես հաստատել եմ և հաստատում եմ, որ եկեղեցին իմ կողմից արդեօք չի ունեցել հողը իր անունով հաստատել: 1888 թվին յունվարի 23-ին ես տուել եմ պ. Մէնանդեանցին հաւատարմութիւն, որի պատճէնը ուղարկում եմ, և օրէնքի պահանջած այլ դոկումենտներ, որ հողը եկեղեցու անունով հաստատէ: Պէտք է նկատել որ պ. Մէնանդեանցն այն ժամանակ երեցփոխի պաշտօն էր վարում: Այսպէս միաժամված լինելով, մէկ կողմ եմ քաշվել:

Սրանից պարզ է, որ ես երբէք չէի կարող արգելք լինել հողը եկեղեցու անունով հաստատելուն, պարզ է և նա, որ կարիք չէ եղել քահանային ինձ դիմելու: Պ. Ծատուրեանին պէտք է յայտնի լինի, որ եկեղեցու շինելու և ուրիշ պիտոյքների համար կայ հոգաբարձութիւն և երեցփոխ: Եթէ ես արգելք լինէի կալուածագիր չինելուն, և եթէ, ինչպէս ասում է պ. Ծատուրեան, տեղիս քահանան դիմած լինէր ինձ այդ մասին և ես այսօր կամ վաղը զցած լինէի, այն ժամանակ եկեղեցու վարչութիւնը կը պահանջէր ինձանից, ինչ որ հարկաւորն է: Եթէ պ. Ծատուրեանը մօտիկ լինէր եկեղեցու գործերին և չը դատէր անհաստատ հիման վրա, այն ժամանակ նրա համար էլ, ինչպէս և Բաթումի հայ ժողովուրդի մեծամասնութեանը, պարզ կը լիներ, որ իմ կողմից ոչինչ արգելք չէ եղել, և թոյլ չէր տայ իրան, այսպէս ասած «ջուր պղտորել»:

Սարգիս Յովհաննիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Այստեղ ձմեռը դեռ իր կատարեալ ոյժի մէջն է, ահագին քանակութեամբ ձիւնը անչարժ ընկած է դաշտերի վրա: Անցեալ տարի այդ ժամանակին ձիւնը արդէն հալվում էր, իսկ այժմ նոյն իսկ սառնամանիք է անում: Հաւանական է որ օրերը միանգամից տաքանալով, ձիւնը արագութեամբ կը հալվի և դարձեալ ջրասոյզ կանէ քաղաքը»:

—

ԱԿԿԷՐՄԱՆԻՑ մեզ գրում են. «Եղանակը չատ լաւ է, մեր այգիները արդէն բացվել են: Ծովը հանգիստ է և ինչպէս լսել ենք, մարտի 7-ից «Ցուրգենեվ» շոգենաւը պէտք է սկսի իր երթևեկութիւնը»:

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Անցեալ փետրվարի 28-ին յօգուտ հայոց ուսումնարանի, թատերասէրների տուած «Վարդան Մամիկոնեան» պիէսայի ներկայացումից՝ մուտք եղաւ 282 ր. 50 կ., իսկ ծախս՝ 95 ր. 50 կ., ուրեմն դուտ արդիւնք մնաց 187 ռուբլի»:

—

ԹԻՖԼԻՍԻ Հրատարակչական ընկերութեան վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել, որ 1890 թվի դեկտեմբերի 16-ին ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովը հետևեալ որոշումը կայացրեց. 1) Զքաւոր հայ դպրոցներին ընկերութեան հրատարակած գրքերի համար սովորականից աւելի զիջումն անել. 2) Ներկայ մարտ ամսից ընկերութեան անդամներին տալ իւրաքանչիւր տարի իրանց ընտրութեամբ 5 ռուբլու գիրք, ամեն մի գրքից մի օրինակ, դրա մէջ հաշուելով նաև անդամակցած տարում տպված գրքերի գինը:

—

Մեզ գրում են ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ, որ այդ քաղաքի հայ երիտասարդների շրջանում դիտաւորութիւն կայ բանալ կիրակեայ դպրոց ժողովրդի համար: Առարկաները պէտք է լինեն, ի հարկէ ռուսերէն և հայերէն լեզու (կարդալ, գրել և պատմել), թւաբանութիւն և կրօն:

—

ԴԵՐԲԷՆԴԻՑ մեզ գրում են. «Մարտի 1-ին, երեկոյեան, Դերբէնտի հասարակութիւնը տօնեց հայոց ուսումնարանի դաշլիճում «Սուրբ Մեսրոբեան» ընթերցարանի գոյութեան տասնամեակը: Այդ տօնի առիթով կայացաւ մի քանի պարոնների և օրիորդների մասնակցութեամբ գրական երեկոյթ: Մուտքը նշանակված էր 25 կոպէկ: Զուտ արդիւնք, յօգուտ ընթերցարանի, դոյացաւ 26 ռուբլի: Կարդացված հաշուից երևաց, որ ընթերցարանն ունի թէ հայերէն և թէ ռուսերէն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՋԷԼԷԲ

II

Այն գիւղը, ուր երկու օրից ի վեր Ջելէբ Մուստաֆան և անասունների տուրք հաւաքող Իզէդդին էֆէնտին, առաջին անգամ մտնելով սկսել էին իրանց գործը, Խնուսի Քօփալ գիւղն էր: Մի գեղեցիկ այգեզարդ գիւղ, բնակված կէսը մահմեդական քուրդերով և կէսը հայերով: Խրճիթներից իւրաքանչիւրը ոչ միայն իր մօտ, այլ և գիւղի ծայրում ունէր իր սեփական այգին, լիքը զանազան պտղատու ծառերով և խաղողի թուփերով:

Ունենալով այգի, ունենալով շրջապատող գեղեցիկ լեռներ և դաշտեր, ուր սփռված էին անհամար անուշահոտ ծաղիկներ, գիւղացիք փետակներ էլ էին պահում. իսկ անասուն նրանք չատ ունէին. շրջակայ մարգագետինների վրա արածում էին բազմաթիւ ոչխարներ և կովեր, իսկ դաշտերից տուն էին գալիս ամեն երեկոյ լծի և այլն եզներ, որոնք իրանց հուժկու կազմուածքով հիացում էին ազդում: Թէչիրները, երբ գիւղից գիւղ մանգալով Հալէբ տանելու ոչխար էին գնում, մի չաբաթ անպատճառ անց էին կացնում այդ գիւղում և դուրս գալիս՝ 100-ից աւելի դառներ և ոչխարներ էին տանում:

Գիւղացին, թէ քիւրդը և թէ հայը աշխատասէր, քրտնող գիւղացի էր. նա հերկում էր, տընկում, խաչնը չատացնում, իր գեղաձիծաղ շրջապատից օգտվում և այնտեղ մնող, այդտեղը կապալով առնող ոչ մի հարկատան, տուրք հաւաքող, իսկէ ժողովող, ոչ մի քիւրդ և ոչ էլ մի բէգ՝ չէր զղջում. վաշխառուն ուրախութեամբ էր Քօփալցիին փոխ տալիս, վաճառականը՝ ապառիկ:

Ոչխարների տուրք հաւաքող Իզէդդին էֆէնդին ի հարկէ չէր նեղանայ, եթէ իր կապալով վերցրած բոլոր գիւղերը Քօփալի պէս լինէին, բայց արի տես, որ Քօփալ գիւղն իսկ այդ տարի չէր կարողանում տուրքը հեշտութեամբ տալ, որովհետև ամառը Նրանց անասունների մէջ մի այնպիսի հիւանդութիւն ընկաւ, որ երբ Ռէս հարուստ Մկօի և Հիսէյն աղայի տաւարներից վեցը կոտորվեցին, գիւղացիք Նրանց երանի էին տալիս, որ այդպէս հեշտութեամբ են ազատվել: Հոտը բռնել էր ամեն կողմ, անդղերը և ցիները ճախրում էին գիւղի վրա, լցվել էին դիակների վրա և չատերը այնքան կերել էին, որ չէին կարողանում տեղերնից շարժվել:

Կար գիւղացի, որ մի գիշերվայ մէջ կորցրել էր 3 կով, մի եզ և 10—15 ոչխար. և այդքանը չատ մեծ բան է գիւղացու համար, որովհետև ամենահարուստը Նրանցից, երկրի այդ դրութեան ժամանակ, հազիւ կարողանում է ունենալ 4—5 կով, 4 եզ և 20—30 ոչխար:

Այդ տարի Քօփալ գիւղը աղքատ էր տաւարի կողմից, այնու ամենայնիւ նա տուել էր տուրք հաւաքողին աւելի քան 500 ռուբլուչ. էլ աւելի էր կարող տալ. սակայն Իզէդդին էֆէնդիի հաշիւները այդքան չէին, նա միայն Քօփալ գիւղի վրա նշանակել էր 1500 ռուբլուչ տուրք. սատանան տանէ, պէտք էր գոյացնել այդ առաջին գումարը, ապա թէ ոչ նա միւս գիւղերում ոչինչ չէք կարող հաւաքել:

Երկու օր էր, որ նա Ջելէբի հետ գիւղը հասել, Հիսէյն աղայի տունն իջել և սկսել էր գործը:

Նրանց գալու լուրը կայծակի արագութեամբ տարածվեց միւս գիւղերումն էլ և այս անգամ սարսափ պատճառեց, որովհետև լսում էին, որ Ջելէբ Մուստաֆան չատ փող ունի, տաւար գնելու անյաղ փափագ և Իզէդդին էֆէնդիի հետ 3 սուարիներ կան, որոնք գիւղացոց տաւարները գոմերից հանելով, Ջելէբի զննողութեան են ներկայացնում:

Քօփալ գիւղից ոչ չատ հեռու, լերան ետեի կրծքի վրա փռվում էր նոյնպէս կէս քիւրդ և կէս հայ բնակիչներով Խնուսի Աղջամելիք գիւղը:

Այդ գիւղը այդի քիչ ունէր, բայց փետակ ունէր. աղքատիկ գիւղ էր և չատ հարկատանների տեսարակների մէջ նա նշանակվում էր իբր մի մաս Քօփալ գիւղի:

Ի հարկէ, հարկատանի նորից գալը և սուարիներ ու Ջելէբ բերելը ամենից առաջ այդտեղի գիւղացոց սարսափեցրեց. հայերը յուսահատ՝ կորցրին իրանց, իսկ քիւրդերը մի երեկոյ հաւաքվեցին և դնացին Շերիֆ աղայի մօտ, նրա գոմի լօնջան, ուր չաբաթվայ մէջ մի քանի անգամ ծերունի Շերիֆը հաւաքում էր գիւղացիներին, եթէ տաք էր, նրա առջևի մայթի վրա էր նիստ կազմում, իսկ եթէ ցուրտ՝ գոմի մէջ:

Շերիֆ աղան 90 տարեկան էր, քաջառողջ մի ծերունի, որը գործից քաշված, ապրում էր հանգստութեամբ և զուարճանում էր իր տան մեծութեամբ ու բազմութեամբ: Հինգ որդի ունէր, չորս հարս, վեց թոռներ, 3 մշակ, երկու հոտաղ, 10 կով ու եզ և 50-ի չափ գառ, ոչխար, խոյ և այծ: Հիւանդութիւնը այս տարի կոտորեց նրա տաւարների կէսը և այժմ Շերիֆ աղան ամեն անգամ երբ համարելով տաւարները, գտնում էր օրը մի քանի հատ պակասած, մի տեսակ տխրութիւն էր զգում և անդադար ասում իր որդիներին.

—Երևի ծերունի Շերիֆն էլ այս տարվայ ձիւնը չի տեսնի, որովհետև մեռան նրա բոլոր ընկերները:

Եւ իրաւ, մի չաբաթվայ մէջ սատկոտեցին այն երկու եզները և մի ձին, որոնց Շերիֆը իր երիտասարդ ժամանակ բանեցրել էր դաշտում և ճանապարհորդութեան ժամանակ:

Շերիֆը լաց եղաւ երբ իմացրին, որ սատկել է նրա ծերունի ձին, մի օր ամբողջ տխուր մնաց, երբ տեսաւ իր ընկեր երկու եզների դիակները, որոնց նրա որդիները գոմից քաշ տալով տարան ձգեցին դաշտը: Շերիֆը աչքը չը դատեց այդ դիակներից, մռայլ դէմքով դիտեց թէ ինչպէս անգղերը և ցիները նախ պոչներ դրծեցին դիակների վրա, յետոյ իջան և սկսեցին գիշատել: Մինչև իսկ Շերիֆը կռացաւ քար վերցնելու, որ

մօտ 1800 հատոր եւ մեծ ընդարձակ 1600 տարվի տարածութեան վրայ։ Ներկայիս Ամերիկայի մարդիկ ամենայն ինչ ունին։ Ամենայն տեսակ գործարանք, հանքեր, հանրագիտարաններ, գրադարաններ, գրատներ, գրագիրներ, գրագրատներ, գրագրութիւն, գրագրեցութիւն, գրագրեցիկ, գրագրեցիկներ, գրագրեցիկներ, գրագրեցիկներ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

—

Ռուսաց լրագիրներում գտնում ենք հետաքրքիր տեղեկութիւններ Ամերիկայի Միացեալ-Նահանգներում դուրս եկած մի վիճակագրական հետազօտութեան առիթով՝ ամուսնական խնդրի մասին։ Այդ հետազօտութիւնը գնահատելի է այն կողմից, որ իր մէջ ամփոփում է՝ ամուսնական խնդրի զարգացման ճիշդ պատմութիւնը՝ սկսած 1867 թուից մինչև 1886 թիւը, հիմնվելով 25 միլիոն ամուսնութեան և 328,716 ապահարզանի դէպքերի վրա։ Ի հարկէ, այդ վիճակագրութիւնն արած է Ամերիկայի Միացեալ-Նահանգներում, և հետազօտութեան գլխաւոր նպատակն է ցոյց տալ իսկապէս «ապահարզանի» զարգացման պատմութիւնը։

Ապահարզանի խնդիրն Ամերիկայում շատ հասարակ և սովորական մի բան է։ Այդ մի ամենակարևոր հասարակական հաստատութիւն է, որը քաղաքակիրթ մարդկութիւնը կարգաւորել ու սահմանել է՝ իր բաղդաւորութեան, իր երջանկութեան համար, այնպէս, ինչպէս և ուրիշ բազմաթիւ տնտեսական և սոցիալական կարգեր ու կանոններ։ Այդ տեսակէտից նայելով ապահարզանի վրա, ի հարկէ, որ գիտութիւնը, ստատիստիկան պէտք է հետաքրքրվի նրանով այնչափ, որչափ և միւս հասարակական խնդիրներով։ Եւ ճշմարիտ, Միացեալ-Նահանգներում կատարված ստատիստիկան, աներկբայելի թիւերով ապացուցանում է, որ քանի կանանը զարգանում և առաջ է գնում, քանի հասարակական պայմանները բարդվում, կատարելագործվում և նրբանում են, այնքան էլ շատանում է ապահարզանի դէպքերի թիւը, այնքան էլ ամուսնական «կապերի» քանդվելը յաճախ է կատարվում։ Օրինակ՝ ապահարզանի դէպքերը հետևեալ կերպով են ընթացել Միացեալ-Նահանգների զանազան քաղաքներում. մինչդեռ առաջին տասնամեակում ապահարզանի դէպքերի թիւը հաւասար է եղել 122,121-ի, երկրորդ տասնամեակում այդ թիւը հասել է մինչև 206,595, որ կը նշանակէ թէ 69 տոկոսով աւելացել է։ Այդ արագ աւելանալը, սակայն, ամենևին կապված չէ աղգաբնակութեան աւելանալու հետ, այլ, ընդհակառակն, չափազանց դերակշռում է նրան։ 1870—1880 թուականների ժողովրդագրութիւնից երևում է, որ Միացեալ-Նահանգներում աղգաբնակութեան թիւն աւելացել է 30 տոկոսով, իսկ ապահարզանի դէպքերի թիւն աւելացել է, նոյն ժամանակվայ ընթացքում, 79%։ Մինչդեռ 1870 թուականին 3,517 հոգու մէջ մի ապահարզան է պատահել, արդէն 1880 թուին՝ այդ մի ապահարզանի դէպքը պատահել է արդէն 2,551 հոգու մէջ։ Ապահարզանի դէպքերը շատանալու ամենաաչքի ընկնող ապացոյցն է հետևեալը. 1870 թուին մի ապահարզանի դէպք դալիս էր 664 ամուսնական զոյգին, իսկ 1889 թուին՝—միայն 481 զոյգին։ Գալով այն պատճառներին, որոնք ամուսնական զոյգերի մէջ փոխադարձ սաեալութիւն են զարթեցնում և պատճառ են դառնում բաժանման, պէտք է ասել, որ այդ հոգեբանական պատճառները երբեմն այնքան բարդ, այնքան խճճված և նուրբ են լինում, որ շատ դժուար են ենթարկվում արտաքին դիտողութեան, ուրեմն և վիճակագրական հետազօտութեան։ Ի հարկէ, այդ տեսակ նուրբ, հոգեկան, զուտ սիրոյ և ատելութեան մոտիվներն աւելի քիչ են պատահում կեանքի մէջ, և աւելի քիչ կարող են առիթ տալ և ապահարզանի։ Ուզում եմ ասել՝ ապահարզանը, ամուսնական զոյգերի բարքը հոգեկան պահանջներից ու զգացմունքներից զրկված, առանց աչքի ընկնող, կոպիտ, անտանելի, ցինիական պատճառների, շատ քիչ է պատահում, ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և Ամերիկայում։ Ապահարզանի դէպք առաջացնող այդ նուրբ հոգեբանական պատճառները, իրանց խորութեան և մեծ բարոյական նշանակութեան պատճառով՝ քննվում և արծարծվում են վէպերի, դրամների և փիլիսոփայական գրուածքների մէջ, որոնցով, անկասկած շատ հարուստ է թէ Եւրոպան և թէ Ամերիկան։ Իսկ մեզ այժմ հետաքրքրող վիճակագրութեան մէջ, որպէս չոր փաստեր, յիշված են գլխաւորապէս արբեցողութիւնը և պոռնկութիւնը, որոնք մեծ մասամբ տեղի են տալիս բաժանման, ապահարզանի։ Մանաւանդ հետաքրքիր է այն հարցը թէ՝ ամուսնական կապը կապելուց որքան ժամանակ յետոյ պատահում են Ամերիկայի ապահարզանի դէպքեր և առհասարակ, ինչ կապ կայ ամուսնութիւնից անցած ժամանակի տևողութեան և բաժանման դէպքերի թիւի մէջ։ Ցայտնվում է, որ ապահարզանի դէպքեր պատահում են մեծ մասամբ նոր պսակվածների մէջ, 1—4 տարվայ ընթացքում, և այն էլ այսպէս. չորս տարվայ ընթացքում պատահած 328,716 ապահարզանի դէպքերից՝ 15,622 դէպքեր պատահել են՝ պսակվելուց մի տարի յետոյ, 21,525 դէպքեր պատահել են պսակվելուց երկու տարի յետոյ, 27,270 դէպքեր պատահել են երեք տարի յետոյ, և 27,909 դէպքեր՝ չորս տարի յետոյ։ Կը նշանակէ, մինչև չորս տարին, ապահարզանի դէպքերն աւելի և աւելի սաստկանում են։ Իսկ այնուհետև սասլիճանաբար սկսում են նուազել, և 20 տարուց յետոյ՝ արդէն համարեա էլ չեն պատահում այդ դէպքերը։ Եթէ ուշադրանք այս վիճակագրական չոր և անդգայ թիւերի կենսական միտքը հասկանալ, այն ժամանակ պէտք է այսպէս մտածենք, որ առաջին տարվայ ընթացքում ամուսնացած զոյգը, եթէ իրար չը սիրելու էլ լինի, դարձեալ «մի կերպ» կարողանում է ապրել, երկրորդ տարում՝ պսակվածների դրութիւնն աւելի անտանելի է դառնում և բաժանվելու ձգտումը սաստկանում է, և այն, մինչև հինգերորդ տարին... Բայց ապրողներ դարձեալ լինում են. լինում են 5, 6, 7, 8, 10... մինչև 20 տարի ապրողներ։ Այդ ապրողներն երևի կամ իրաւ աւելի երջանիկ են կամ եթէ երջանիկ չեն, հանդամանքները չեն թոյլ տալիս բաժանվելու, կամ վերջապէս գուցէ ընտելանում են կեանքի եղանակին և այլն։ «Երևի»-ներ և «գուցէ»-ներ կարող են բազմաթիւ և բազմատեսակ լինել, սակայն թիւերը հաստատում են անվիճելի իրողութիւնը։

Ե. Ղ.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սալմաստ, 24 փետրվարի

Սալմաստեցիք Տեառնընդառաջը տօնում են բոլորովին տարօրինակ կերպով։ Հայերը Տեառնընդառաջի գիշերը, երբ եկեղեցուց դուրս են գալիս արտաքին արարողութիւնները կատարելու գալթում, այդտեղ կուտակում են ահագին քանակութեամբ խրիւներ, որոնք բաղկանում են չոր վաղի խուրձերից, դաշտային խոտերից և այլն։ Քահանան կարդում է աւետարանը, իսկ տիրացուները գիրքը և շարականները։ Երբ ծիսական արարողութիւնները բոլորովին վերջանում են, եկեղեցու երեցփոխը հրաւիրում է ժողովրդի խուժանից նորապսակ երիտասարդներին խրիւի կոյտի մօտ և պահանջում է խրաքանչիւրից մի-մի ռուբլի դրամ։ Ապա քահանան իր ձեռքի վառ մոմով հրդեհում է խրիւի կոյտը, որից բարձրանում են ծխախառն բոցեր և որոնց վրայից սկըսում են նորապսակ երիտասարդներն անցուդարձ անել և թռչկոտել.... Մինչդեռ նորապսակները բոցերի հետ մրցում էին, մենք դարձանք մի փոքր առաջ ծերունու, հարցնելով բոցերի վրայից երիտասարդների թռչկոտելու շարժառիթը։ Ծերունին պատասխանեց, որ եթէ չը ցատկեն՝ չիլէն կը կոխէ (չիլէ թարգմանվում է քառասնաքակոխ. եթէ նորապսակները Տեառընդառաջի բոցերի վրայից անցուդարձ չանեն, իրանց զաւակները կը մեռնեն և ոչ մինը կենդանի չի մնայ)։ Երբ արդէն նորապսակները իրանց այդ անցուդարձից դադրում են, ահա երիտասարդները դիմում են դէպի անբոց մոխրակոյտը և նրանցից իւրաքանչիւրը իր ձեռքի ղնարդան (երկմատչափ և մաքիմուլի հաստութեամբ մի տեսակ չոր խոտ, որը մոմի նման վառվում է), կամ մոմը կպցնելով, ընթացքը ուղղում են դէպի տուն և բարձրանալով տան կտուրը, հրդեհում են կտուրի խրիւները, որոնց եկեղեցի գնալուց առաջ պատրաստում են կոյտ-կոյտ իւրաքանչիւրը կտուրի վրա։ Այդ գիշեր ընտանիքի ոչ մի անդամը չէ կարող մնալ տան մէջ. ամենքը բարձրանում են կտուրի վրա, և մինչև որ կտրի խրիւակոյտը իր տհաճելի և անախորժ հոտը և բոցը չարձակէ, իրանք չիլակոխ կը լինեն և ամբողջ տարին հիւանդ։

Նրանք, բացի կտրի վրա խրիւներ այրելուց, արձակում են հրացաններ, ատրճանակներ, օդագնաց ֆիշէնկներ։ Պարսիկները հայերի այդ աւանդութեանն ասում են. «էրմէնիլերին ալիր չարշանպայ կիճեսի»։ Պարսիկներն ունեն իրանց օրէնքով «ախրը չարշանպայ» անունով գիշերային այդպիսի մի տօն, և հայերի նման կուտրներից հրացաններ են արձակում. չարունակ երեքշաբթի և չորեքշաբթի գիշերները։ Այդ տօնը պատահում է ճիշդ հայերի Տեառնընդառաջից երկու շաբաթ առաջ։ Գուցէ հայերը այս աւանդութիւնը պարսիկներից վերառած լինեն, կամ կռապաշտութեան ժամանակից մնացած լինի։

Հիմա գանք Տեառնընդառաջի առիթով եղած հրաշալի և սարսափելի բժշկութեանը։

Տեառնընդառաջում, եթէ պատահմամբ տենդով հիւանդներ լինեն, հիւանդի մէջքից թոկը կապում են և թոկի ծայրը ուղղակի դուրս են բերում նահապետական տան երդիկից ու սկսում են շտապով հիւանդին դուրս քաշել երդիկի ծայրից, հաւատացած լինելով, որ դրանով անմիջապէս պիտի անցնի հիւանդի տենդը։

Այս տարի Ղալասարում Պոչընկայ մականուանեալ Գէորգ Բաբիկեանի 4 տարեկան աղջիկ երեխան, երկար ժամանակ այդ հիւանդութեան ենթակայ լինելով, կապոտում են անմեղին և շտապում են երդիկից կտուրը դուրս բերել։ Բայց դժբաղդաբար, խեղճ երեխայից թոկը պոկ է գալիս և դեռ երդիկին չը մօտեցած, երեխան ուղղակի ընկնում է գլխիվայր թոնրի եղերքում դեռ եղված շրջանակաձև քարերի վրա, և գլխի ուղեղը դուրս թափվելով, յաւիտեան ազատվում է տենդից։ Երեք տարի սրանից առաջ էլ, Սանամերիկ գիւղում, Վարդան Ստեփանեանի 25-ամեայ հարսնացու օրիորդը, տենդով հիւանդ լինելով, դրան էլ, նախորդի պէս, կապոտում և սկսում են երդիկից դուրս բերել, բայց դժուարանում են, որովհետև հարսնացուն չափազանց չաղ լինելով, երդիկի ծակից դուրս չէ գալիս. ստիպված իջեցնում են ցած և կրկին շինութեան արտաքին տան պատի կողքից քաշում են դէպի կտուրը, ասելով հաշիւը մի և նոյն է, թէ երդիկի ծակից և թէ շինութեան պատից, բաւական է որ կտուրը բարձրանայ հիւանդը։ Բայց որովհետև թոկի ամրութիւնը անհամապատասխան է դանվում հարսնացուի բնական ծանրութեան դէմ, կտրվում է և հիւանդը 3 սաժէն բարձրութիւնից վայր ընկնելով, ողնաշարի բոլոր ոսկորները կոտրտվելով, դառնում է անդամալոյծ։ Աժմս անդամալոյծի և մարդու մէջ մեծ անհամաձայնութիւններ կան, որովհետև մարդը ուզում է ուրիշ կին բերել, բայց անդամալոյծը մարդուց չէ հեռանում, որովհետև օրէնքը չէ թոյլատրում։

Առհասարակ ինքնակոչ բժիշկներ Սալմաստում շատ շատ են, որոնք հարստահարում և խաբում են ազէտ ժողովրդին։ Ցուսով ենք, որ այդ յիմարական բժշկութիւններն էլ կը վերացվեն Սալմաստից, երբ հրաւիրված ցակոբեան բժիշկը շուտով տեղս ժամանէ։

Ռ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Չէխական լրագիրները հաղորդում են, որ մայիսի 18-ին աւստրիական կայսրը կայցելէ Պրագայի չէխական ցուցահանդէսը։

—Գերմանական «Post» լրագիրը հերքում է Բերլինի քաղաքական շրջաններում տարածված լուրը, իբր թէ Բէտիսէր մինիստրի դիրքը խախտված է։

—Ինչպէս հեռագրում են Բերլինից, վերջին մի քանի շաբաթների ընթացքում 12,000 բանուորներ արձակված են զինուորական արհեստանոցներից, որովհետև գերմանական կառավարութիւնը աւարտել է արդէն նոր ձևի հրացանների պատրաստելը։

—Հռոմից հեռագրում են, որ պրինց Ժերոմ Բոնապարտ վախճանվեց իր կնոջ, պրինցուհի Մատիլդայի ներկայութեամբ։ Իտալական թագաւորը և հանգուցեալի զաւակները աւելի ուշ եկան, երբ պրինցը վախճանված էր արդէն։

—Լրագիրներում կարդում ենք, որ պրինց Ժերոմ-Նապոլէոն Բոնապարտ մեռնելուց առաջ մերժեց ընդունել հաղորդութիւնը։ Հանգուցեալը, ինչպէս պատմում են, թէև ընդունեց մեռնելուց առաջ իր աւագ որդուն, Վիկտոր պրինցին, որի հետ նա հաշտ չէր, բայց այնու ամենայնիւ թէ իր կարողութիւնը և թէ ընտանիքի ներկայացուցչի քաղաքական ժառանգութիւնը կտակեց իր կրտսեր որդուն, Լուի-Նապոլէոն պրինցին։

—Բոլգարական պատերազմական մինիստրը պատուիրեց Մագդեբուրգի մօտ գտնվող Գրիւզոնի գործարանին այլ և այլ պատերազմական պարագաներ 4 միլիոն մարկ գումարի։

—Գերմանական աղգային-աղատամիտ կուսակցութեան ընտրողական մանիֆեստը յայտնում է, որ Հանովերեան ընտրողական շրջանում չի թոյլ տայ ոչ մի ուրիշ թեկնածութիւն, բացի իշխան Բիսմարկի թեկնածութիւնից։ Ֆրանսիական «Paris» լրագիրը կարծում է, որ Բիսմարկ անպատճառ կընտրվի գերմանական ըէյխստագի պատգամաւոր։

—Գիբրալտարից հեռագրում են, որ «Utopia» շոգենաւի խորտակման ժամանակ կործանվեցան մօտ 500 հոգի։ Փրկված են 318 հոգի ճանապարհորդներից, իսկ 90 դիակներ արդէն գտնված են։

—Թիւրքաց դեսպան Զիա-բէյ Հռոմից տեղափոխվում է Լօնդոն։

—Սարդուի «Thermidor» պիէսան, որի ներկայացումներն արգելվեցան Պարիզում, այս օրերս ներկայացվեց Բերլինում և ահագին աջողութիւն ունեցաւ այնտեղ։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մի գերմանուհի, տիկին Ֆօն-Բրօնզար, հեղինակեց մի օպերա «Hiarne» վերնագրով։ Դա առաջին անգամն է որ մի կին մի օպերա է գրում։ Օպերան ներկայացվեց Վէյմարի թատրոնում և մեծ աջողութիւն ունեցաւ։ Տիկին Ֆօն-Բրօնզար նուիրեց իր երաժշտական հեղինակութիւնը գերմանական կայսրին։

* *

Ադելինա Պատտի այս օրերս կենցէրտ է տալու Դրէզդէն քաղաքի մուզէի դահլիճում։ Նա ստանալու է այդ մի հատ կենցէրտի համար 10,000 մարկ վարձ։

* *

«Times» լրագիրը, քաղում է «Իրան» պարսից լրագրից այն լուրը, որ պարսից կառավարութեան հրամանով Մէլքում-խան զրկված է իր ունեցած բոլոր աստիճաններից և տիտղոսներից։

* *

Ֆրանսիայի և Անգլիայի մէջ տելեֆոնային յարաբերութեան բացվելուն պէս՝ իրար հետ կը խօսակցեն տելեֆոնի միջոցով՝ Ուէլսի պրինցը և նախագահ Կարնօ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 մարտի։ Քաղաքային կանոնադրութեան նոր նախագծի քննութեան ժամանակ վերջնականապէս ընդունված են հետևեալ փոփոխութիւնները. — կատարող և կարգադիր իշխանութիւնների միացնելը քաղաքագլխի ձեռքում՝ վերացվում է. ձայնաւորների ընտրութիւնները պէտք է լինեն շրջաններով և կարգերով, այլ և մտցնվում է կառավարչական խիստ վերահսկողութիւն։

ՎԱՐՇԱՎԱ, 13 մարտի։ Դատաստանական պալատը հաստատեց նահանգական դատարանի վճիռը Սկուբլինսկայի, Ագնեսա Զդանօվսկայի և Պոլկովսկու վերաբերմամբ, իսկ Կուբկովային և Էմիլիա Զդանօվսկային, որոնք նահանգական դատարանի կողմից անմեղ էին ճանաչված, դատապարտեց բանտարկութեան, առաջինին՝ մի տարով, երկրորդին՝ չորս ամսով։

ՎԻԷՆՆԱ, 13 մարտի։ Նոր թիւրիմացութիւններ ծագեցան Աւստրօ-Ունգարիայի և Սերբիայի մէջ՝ ֆինանսական քաղաքականութեան շրջանում, այն պատճառով, որ սերբիական կառավարութիւնը ներկայացրել է սկուպշչինային մի օրինագիծ, որի համաձայն Սերբիա բերվող մի քանի ապրանքներից, բացի մաքսահարկից, պէտք է վերցվի և ակցիզ։ Աւստրօ-ունգարական կառավարութիւնը յայտնում է, որ այդ օրինագիծը հակասում է Աւստրօ-Ունգարիայի և Սերբիայի մէջ կապած պայմանագրին, և սպառնում է նոյնպիսի խիստ միջոցներ ձեռք առնել Սերբիայից բերվող ապրանքների դէմ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 մարտի։ Հրատարակված է Բարձրագոյն ուկազ՝ հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութեան ուղղած՝ թոյլատրելու երկաթուղու գիծ անցկացնել Վլադիվոստոկից մինչև Գրաֆսկայա նաւահանգիստը։—«Новое Время» լրագրի հատով վաճառելը նորից թոյլատրված է։—«Восходъ» ամսագրին և նրա հետ հրատարակվող «Недѣльная Хроника» շաբաթաթերթին յայտնված է երրորդ նախազգուշութիւն՝ դադարեցնելով հրատարակութիւնը 6 ամսով և գործադրելով «Недѣльная Хроника»-ի վերաբերմամբ, դադարեցման ժամանակամիջոցը լրացնելուց յետոյ, 144-րդ յօդուածի ծանօթութիւնները։ Այդ վճիռը կայացված է այն՝ պատճառով, որ այդ հրատարակութիւնը յամառու-

թեամբ շարունակում էր իր վերին աստիճանի վնասակար ուղղութիւնը, որն արտայայտված էր մի շարք յոդուածների մէջ, և ի միջի այլոց Աբրամովիչի վէպի և Մորդովցեվի «Между молотомъ и наковальнею» վէպի մէջ։»—Journal de St. Pétersbourg» հաստատում է, որ արտաքին գործերի մինիստրի օգնական Վլանգալի և ասիական դեպարտամենտի դիրեկտոր Զինովիեվ նոր պաշտօններ են ստանում, և որ Վլանգալիի տեղ նշանակվում է Սոկհոլմի դեսպան Շիշկին, իսկ Զինովիեվի տեղ՝ կայսրուհի Մարիայի հիմնարկութիւնների պատուաւոր հոդաբարձու Կապնիստ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 մարտի։ Այն դիւաները, որոնք արվել են Եաղրինցեվի ճանապարհորդութեան ժամանակ և Մենդելիայից բերված հնութիւնները ա-

ռիթ տուեցին կազմակերպելու մի նոր գիտական արշաւանք գիտութիւնների ճեմարանի կողմից, հետախուզելու հին Կարակարումա քաղաքը։ Ճանապարհորդութիւնը կը սկսվի գարնանը՝ ակադեմիկ Բաղլովի ղեկավարութեամբ. կը մասնակցեն Եաղրինցեվ, հնագէտ Կլեմենց, մի թարգման, մի տօպօգրաֆ և լուսանկար։ Հետախուզութիւնները կը տևեն չորս ամիս։

ՊԱՐԻԶ, 14 մարտի։ Այսօր ռուսաց դեսպան Մորենգէյմ հանդիսաւոր ունկնդրութեան ժամանակ յանձնեց նախագահ կարնօին Ս. Անդրէյ Նախակոչի շքանշանը և յայտնեց թագաւոր Կայսրի սրտագին ողջոյները։

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԹԱՏՐՕՆ

ԱՅՍՕՐ, ՄԱՐՏԻ 16-ԻՆ, ՇԱԲԱԹ

կայանալու է յայտնի երգչուհի

ՆԻԿԻՏԱՅԻ

ԿՕՆՑԵՐՏԸ

Մասնակցութեամբ պալատական պիանիստ ԼԻԲԼԻՆԳԻ։

Տոմսակները և պրոգրամը կարելի է ստանալ բոյալների պահեստում Բ. Միլի մանեանի, Դվորցովայա փողոցում։

ԲԱՆԿԻ ԹԱՏՐՕՆ

ԱՅՍՕՐ, ՇԱԲԱԹ, ՄԱՐՏԻ 16-ԻՆ

ԱՆՆԱ ԺԻԻԴԻԿ

կը ներկայացնէ նոր կոմեդիա LE DECORÉ վերնագրով, 3 գործողութեամբ, հեղ. Մէլիակի, որը մեծ աջողութիւն ունի Պարիզում։ Վերջում՝ տ. Ժիւդիկ կերգէ ՇԱՆՍՕՆԵՏՆԵՐ։ Տոմսակները զլոշմով, որոնք վերցրած են 16-ի ներկայացման համար, այժ ունեն և վաղը։

ԿԻՐԱԿԻ, ՄԱՐՏԻ 17-ԻՆ

ՆԻՏՈՒՇ

օպերետ 3 գործողութեամբ և 4 պատկերներով։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 18-ԻՆ ՄԱՐՏԻ

Նախավերջին ներկայացումն. կը ներկայացվի

ՖՈՔՐԻԿ ԲԱՐՕՆԷՍԱՆ

(LA FEMME à PAPA)

Սկիզբը 8 ժամին երեկոյեան։ 1—1

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունվարից սկսած

ԵՒ ՓՈԽԱԴԱՐՁ

Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսօն, և կ. Պոլիս։

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի, 27 մարտի (8 ապրիլի) շոգենաւ ԱՆԱՏՕԼԻԱ — ԳԱԲՐԻԳ
— 10/22 ապրիլի — ՄԻՆԴՐԵԼԻԱ — ԺԻԲՈՒԷՆ
— 24 ապրիլի (6 մայիսի) — ՍԻՐԿԱՍԻ — ԲՕՇԷԼ
— 8/20 մայիսի — ԱՆԱՏՕԼԻԱ — ԳԱԲՐԻԳ

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ։

Տոմսակների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գնից պակսեցրած են։

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ընկերութեան ագէնտներին. ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գարանիօնին, Նաբերէժնայա, ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. Վիկտոր դ'ԱՐՆՕԻՆ, Միջին-փողոցում, Նախկին զեներալ Տէր-Աստատուրովի տանը, ԲԱԳԻՈՒՄ, Սամուէլ Դիլգարովին, կօլիւբիակինսկայա հրապարակ, և ՆՈՎՈՐՕՍԻՑՍԿՈՒՄ պ. Լուի Բընօին։ 1—10 (ե. շ.)

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

MESSAGERIES MARITIMES

(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՕՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 23 մարտի (4 ապրիլի) դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ TIGRE (ՏԻԳՐ) շոգենաւը, նաւապետ NIEL (ՆԻԷԼ) դէպի Կ. Պոլիս, Մարսէլ, Հավր, Լօնդօն, մտնելով և միջանկեալ նաւահանգիստները։

Ագէնտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Դ. ԷՍՍԷՆԺԷՐ, ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ, իսկ ԲԱԳՈՒԻ մէջ՝ ԳՕԼԴԼՈՒՍՏ։ 2—2

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ՓՈՐՁՎԱԾ ՀԱՇԻԱՊԱՀ ցանկանում է ծառայել կօնտորաներում կամ առևտրական տներում։

Աւարտել է իտալական ամբողջ հաշւապահութիւնը։

Դիմել Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ տպարանը, Троицкій переулокъ, № 11. 2—8

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ

ТОВАРИЩЕСТВО

МЕХАНИЧЕСКАГО И ЧУГУННО-ЛИТЕЙНАГО ЗАВОДА

БЕЛЛИНО-ФЕНДЕРИХЪ

ВЪ ОДЕССѢ.

Складъ и производство сельско-хозяйственныхъ и заводскихъ машинъ и орудій, какъ-то:

Постоянныхъ паровыхъ машинъ и котловъ разныхъ системъ и силъ, Мукомольныхъ мельницъ и всякаго рода принадлежностей къ нимъ. Щеретовокъ, вальцовыхъ поставовъ крупосѣекъ, буратовъ и всякихъ другихъ мельничныхъ машинъ системы Г. Даверіо. Лѣсопильныхъ станковъ съ пилами. Конныхъ молотилокъ, и приводовъ, вѣялокъ, соломорѣзокъ, кукурузныхъ молотилокъ—ручныхъ, конныхъ и паровыхъ Прессовъ для винограда и сѣна. Маслобоекъ, брандспойтовъ и пасовъ. Конныхъ грабель «Голинсвортъ».

Производство котельныхъ работъ и отливка изъ чугуна и мѣди.

Выполненіе всякаго рода заказовъ для паровыхъ вальцовыхъ мельницъ, винокуренныхъ, пивоваренныхъ, сахарныхъ и другихъ заводовъ, вагоны для конножелѣзныхъ дорогъ.

Складъ локомобилей, паровыхъ молотилокъ, конныхъ молотилокъ со штифтовыми барабанами и конныхъ приводовъ извѣстной фирмы Клйетонъ и Шутлівортъ въ Линкольнѣ, и Вѣнѣ.

Главный складъ жатвенныхъ машинъ и косилокъ «Желѣзная рама» и «Континенталь» Джонстона.

Единственный складъ вальцовыхъ станковъ Г. ДАВЕРІО въ Цюрихѣ.

Заводъ имѣетъ свой собственный эллингъ для постройки пассажирскихъ и буксирныхъ пароходовъ, паровыхъ катеровъ, баржъ и проч. и принимаетъ заказы на поднятіе на эллингъ судовъ для исправленія или окраски подводныхъ частей и ихъ корпусовъ.

Агентъ въ Ростовѣ н/Д. Г. Я. Золотухинъ, Николаевскій пер. д. Арт. Яблокова, противъ Реальнаго училища кв. № 8.

52—100 (ե. շ.)



Գերմանական գրասենեակ ՀԱՅԿ ՎԻԼՀԵԼՄ ԶԷՐ գրանցված ապրանքանիշ. Բարձրագոյն գրասենեակ ապրանքանիշերի գրանցման համար։ Գրասենեակ գտնվում է Բերլին, Ֆրիդրիխ-ստրասսե 17—50 (2.)

Միայն ֆաբրիկային այդ մարկա կրելով, վաւեր է համարվում։

ՄԻ՞ ՀԱԶԻՐ

Մեղրից և խոտերից պատրաստված մայց-էկստրակտ և կոնֆետներ

Լ. Գ. ՊԵՏՇ ԵՒ ԸՆԿ. ԲՐԷՍԼԱՈՒԻ ՄԷՋ։

Քիմիական վերլուծութեամբ և բժշկական փորձերով ապացուցված է, որ այդ պրէպարատները չեն պարունակում առողջութեան համար որ և է վնասակար բաղադրութիւններ, և այդ պատճառով նրանց ներմուծումը Ռուսաստան և նրանց այդտեղ ծախելը թոյլատրված է։

ԳԻՆԸ. չիրը 1 ր. 25 կ. և 2 ր. 40 կ. կոնֆետները 30—50 կոպ.։

Գլխաւոր պահեստ Ռուսաստանում

Վ. ԱՈՒՐԻԽԻ մօտ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, Կոլոկոլնայա 18/19

Վաճառվում է Ռուսաստանի բոլոր դեղագործարաններում և դեղատներում։

11—16 (ամսի 1 և 15)

Լոյս տեսաւ

և վաճառվում է Թիֆլիսի գրավաճառանոցներում

ՄՏՐԻ ՄՇԱԿԸ

Խ. Մալումեանի

Գինը 50 կոպ.

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Այժի հասցնելը տարածութեան վրա.

ՏԵԼԵՖՕՆՆԵՐԻ ՍԱՐՔԵԼԸ.

Էլէկտրական նշաններ.

ԶԱՆԳԱԿՆԵՐ

ԳԱԼՎԱՆՕՊԼԱՍՏԻԿԱ.

Էլէկտրօլիզ,

Ակումուլատորներ, Էլէմենտներ,

ՇԱՆԹԱՐԳԵԼՆԵՐ.

Նախահաշիւներ և ծրագիրներ ձրիաբար.

ԷԼԷԿՏՐՕՆ

ԳԼԷԲՕՎ եղբայրների

ՌՕՍՏՕՎ (Դօնի վրա)

Մեծ Սադովայա փողոց, 24

ՌՕՍՏՕՎԸ (на Дону)

ԲՐ. ԳԼԵԲՕԲԻ

Большая Садовая, 24.

ԳԱԶԱՑԻՆ ՆՈՐ ՇԱՐԺԻՉՆԵՐ

Օտտօ սիստեմայի, որոնք իրանց են ուղղում ու օծում։

Գազի համար — ածուխից,
— — — նաւթից,
— — — անտրացիտից
— — — կէրոսինից
1/2-ից մինչև 120 ձիու ոյժի։

Շոգեմեքենաներ մեծ արագութեան.

16—100 (ե. շ.)

Дозволено цензурою, Тифлисъ, 15 Марта 1891 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.